

## BBSLA-ի ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ RIME ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### 1. Գործողության ոլորտը և կիրառումը

- 1.1 The BlackBerry Solution-ի Արտոնագրի պայմանագիրը (BlackBerry Solution License Agreement, “**BBSLA**”) վերաբերում է RIME խանութների միջոցով իրականացվող բաշխման բոլոր տեսակներին (անվճար և վճարովի): Սույն հավելվածը սահմանում է գնման լրացուցիչ պայմանները (“**Գնման Պայմաններ**”), որոնք կիրառելի են ցանկացած գնման առաջարկի համար, որտեղ RIME-ը հանդիսանում է գործարքի վաճառող կողմ (կամ վաճառող կողմի գործակալ) (հավաքականորեն՝ «**Գնումներ**») և գնում կատարելու գործընթացը՝ «**Գնել**» կամ «**Գնված**»): RIME նշանակում է Research In Motion E-Commerce S.à.r.l., Research In Motion E-Commerce կորպորացիա, Research In Motion E-Commerce Inc. կամ RIM-ի նման այլ մասնաձյուղը, որը նշված է <http://www.blackberry.com/legal/rime> կայքում որպես առաջարկի առաքիչ Ձեր վարչատարածքային միավորում: RIME խանութում կամ համապատասխան տեղեկատվության փոխանակման ընթացքում «**BlackBerry Commerce**»-ին հղումը, սույն Գնման պայմանների շրջանակներում, նշանակում է հղում RIME-ին: Այս հավելվածում մեծատառով գրված ցանկացած տերմին, որը սահմանված չէ սույն հավելվածում, պետք է ունենա այն նշանակությունը, որը սահմանված է BBSLA-ում: Եթե Դուք դեռևս չունեք BBSLA-ի պատճենը Ձեր վարչատարածքային միավորի համար, ապա այն կարելի է գտնել [www.blackberry.com/legal](http://www.blackberry.com/legal) կայքում:
- 1.2 ԱՅՍ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՀԱՆԴԻՄԱՆՈՒՄ Է ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՁԵՐ՝ ՈՐՊԵՍ ԳՆՈՐԴ («ԴՈՒՔ» ԵՎ «ՁԵՐ» ՀՂՈՒՄՆԵՐԸ ԲԱՅԱՏՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՐԵՆ) ԵՎ RIME-Ի ՄԻՋԵՎ, ԵՐԲ ԴՈՒՔ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՔ ԱՅՍ ՀԱՎԵԼՎԱԾԻՆ՝ ԸՆՏՐԵԼՈՎ ՍՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ «ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» ՏԱՐԲԵՐԱԿԸ, ԵՎ ԱՅՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԲՈԼՈՐ ՀԵՏԱԳԱ ԳՆՈՒՄՆԵՐԻՆ, ԵԹԵ ԿԱՍ ՄԻՆՉ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ, ԵՐԲ RIME-Ը ԿՆՇԻ, ՈՐ ՀԵՏԱԳԱ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԱՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ: ԵԹԵ ԴՈՒՔ ՊԱՏՐԱՍՏ ՉԵՔ ՀԱՄԱՁԱՅՆԵԼ ԱՅՍ ՀԱՎԵԼՎԱԾԻՆ (ԿԱՍ ՀԵՏԱԳԱ ՑԱՆԿԱՑԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻՆ, ՈՐԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՅՍ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՆՄԱՆԸ), ՁԵԶ ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎԻ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՏՊԵԼ ԳՆՄԱՆ ԱՅՍ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ (ՈՐԸ ԿԱՐԵԼԻ Է ԳՏՆԵԼ [www.blackberry.com/legal](http://www.blackberry.com/legal) ԿԱՅՔՈՒՄ) ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ:
- 1.3 ԳՆՄԱՆ ԱՅՍ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԵԼՈՎ՝ ԴՈՒՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԵՔ RIME-ԻՆ, ՈՐ ՁԵՐ ՏԱՐԻՔԸ ԳԵՐԱՁԱՆՑՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՉԱՓԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԸ:
- 1.4 Ձեր կողմից ներկայացված պատվերը հանդիսանում է Առաջարկի գնման վերաբերյալ Ձեր առաջարկը RIME-ին՝ BBSLA-ի պայմաններին համապատասխան, ինչպես փոփոխված է այս հավելվածում և այն ենթակա է RIME-ի կողմից ընդունմանը: Որոշակի Գնմանը վերաբերող պայմանագրի ընդունումը տեղի է ունենում այն ժամանակ՝ որն էլ ավելի շուտ պատահի՝ երբ (ա) RIME-ը ընդունում է գնման համար կատարած Ձեր վճարումը և (բ) RIME-ը Ձեզ է հանձնում պատվերի հաստատումը, որով թույլատրում է Ձեզ ներբեռնել կամ այլ կերպ Ձեզ հասանելի դարձնել Առաջարկը: Գնման պայմանները հանդիսանում են յուրաքանչյուր Առաջարկին վերաբերող առանձին պայմանագիր Ձեր և RIME-ի միջև, և յուրաքանչյուր Առաջարկում տեղ գտած թերությունը կամ պակասությունը թույլ չի տալիս Ձեզ չեղյալ համարել Ձեր գնումները այլ Առաջարկների համար, անկախ նրանից, թե դրանք պատվիրվել են միևնույն ժամանակ, թե ոչ:
- 1.5 Դուք ընդունում եք, որ RIME-ը գործում է որպես Առաջարկի վաճառող վաճառքը ամբողջացնելու, և, բացառությամբ In-App ապրանքների, Առաջարկը Ձեզ հանձնելու գործընթացը ամբողջացնելու ընթացքում: RIME-ը կառաքի Առաջարկները՝ թույլատրելով Ձեզ ներբեռնել Ձեր BlackBerry Handheld Software-ը կամ վերջինիս մեկ այլ կերպ հասանելի դարձնելով Առաջարկները: Դուք նաև ընդունում եք, որ In-App ապրանքները պահված չեն RIME-ի սերվերի մեջ և չի առաքվում RIME-ի խանութի միջոցով:

Այդ In-App ապրանքների Առաջարկների վաճառողը և ոչ թե RIME-ն է պատասխանատու In-App ապրանքների առաքումը իրականացնելու համար:

- 1.6 Իր հայեցողությամբ RIME-ը կարող է մերժել Ձեր պատվերը (չկրելով ոչ մի պատասխանատվություն): Այդ դեպքում Ձեր կողմից հաստատված վճարման միջոցից չի գանձվելու որևէ գումար կամ RIME-ը կփոխհատուցի այդ առաջարկի համար արված ցանկացած վճարումը:
- 1.7 Դուք համաձայն եք և ներկայացնում եք, որ գնումը կատարում եք միայն Ձեր անձնական օգտագործման և ոչ թե հետագա տարածման համար:
- 1.8 Գնման համատեքստում, BBSLA-ում սահմանված, RIME խանութում, առանց նախորոք ծանուցման, թարմացումներ, փոփոխություններ և ճշգրտումներ կատարելու իրավունքը ներառում է արժեքի և գնման պայմանների փոփոխությունները, ներառյալ RIME խանութի պայմանները և, BlackBerry վճարման ծառայությունների օգտագործմամբ, In-App ապրանքների գործարքների RIME-ի կողմից իրականացումը, նկատի ունենալով, որ այդպիսի փոփոխությունները կվերաբերվեն միայն այն պատվերներին, որոնք Ընդունված չեն եղել փոփոխության ժամանակ: Գնի պաշտպանություն գոյություն չունի և, եթե Դուք որոշեք ուժի մեջ թողնել պատվերը, որը դեռ ընդունված չի եղել փոփոխության պահին, Դուք ընդունում եք, որ Առաջարկը կտրամադրվի՝ համաձայն այն ճշգրտված կամ փոփոխված նկարագրության կամ փոխված գնի և կենթարկվի վերանայված գնման պայմաններին:
- 1.9 RIME-ը կարող է պահպանել այդ ժամանակաշրջանի բոլոր գործարքների հետ առնչություն ունեցող փաստաթղթերը, ինչը կարող է թույլատրվել համապատասխան օրենքներով: Դուք պետք է տպեք RIME խանութի միջոցով արված Ձեր գնումների հետ կապված բոլոր փաստաթղթերը: Ձեր գրավոր խնդրանքին համաձայն հնարավոր է, բայց ոչ երաշխավորված, որ RIME-ը կարողանա Ձեզ տրամադրել այդ փաստաթղթերի կրկնօրինակները:

## **2. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 2.1 RIME-ը իրավունք է վերապահում ստուգելու Ձեր բնակության վայրը և վճարման վերաբերյալ տեղեկությունները (ստորև սահմանված) և դիմել այլ քայլերի Ձեր ինքնությունը հաստատելու կամ խարդախությունը կամ գողությունը հայտնաբերելու և դրանից պաշտպանելու համար:
- 2.2 Դուք պատասխանատու եք, որպեսզի RIME խանութ մուտք գործելու և/կամ Առաջարկների համար վճարումներ կատարելու նպատակով օգտագործվող գաղտնաբառերը մնան անձեռնմխելի և գաղտնաբառերի վերաբերյալ BBSLA-ի դրույթները համապատասխանեն գնումներ կատարելիս Ձեր կողմից դրանց օգտագործմանը: Եթե Դուք մեկ անգամ մուտքագրեցիք Ձեր գաղտնաբառը, Ձեզանից չի պահանջվի գնումներ կատարելու համար կրկին անգամ այն մուտքագրել, քանի դեռ գաղտնաբառը մնում է ուժի մեջ, ինչպես նշված է Ձեր վճարման տարբերակների կարգավորումների մեջ: Եթե Դուք ցանկանում եք, որ Ձեզանից պահանջվի մուտքագրել գաղտնաբառը յուրաքանչյուր գնում կատարելու ժամանակ, Դուք պետք է փոխեք գաղտնաբառը պահանջելու կարգավորումը Ձեր վճարման տարբերակների կարգավորումների մեջ:
- 2.3 RIME խանութի միջոցով արվող առաջարկները նախատեսված են անհատների համար, որոնք ունեն համապատասխան հնարավորություն և կարողություն օրենքով համաձայնություն տալու պահանջվող տեղեկությունների տրամադրմանը և կնքելու կատարման համար պարտադիր պայմանագիր: Դուք համաձայն եք ֆինանսապես և այլ կերպ պատասխանատու լինել RIME խանութի օգտագործման համար, ինչպես նաև Ձեր հաշվի ցանկացած օգտագործման կամ այլոց կողմից տեղեկությունների մուտքագրման համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով, անչափահասները: Դուք նաև համաձայնում եք վերահսկել RIME խանութի յուրաքանչյուր օգտագործման դեպքը և Ձեր անունից կամ հաշվից Ձեր կողմից լիազորված անձանց կողմից յուրաքանչյուր գնման կատարումը:
- 2.4 RIME-ը իրավունք է վերապահում քայլեր ձեռնարկել, որոնք RIME-ի կարծիքով ողջամտորեն

անհրաժեշտ կամ նպատակահարմար են, պարտադրելու կամ ստուգելու այս Գնման պայմանների յուրաքանչյուր մասի հետ համապատասխանությունը, ներառյալ՝ նպաստելու համար համապատասխան հարկերի փոխանցումը պետական մարմիններին կամ վճարների փոխանցումը Առաջարկի վաճառողներին, որոնց առաջարկները Դուք գնել եք (ներառյալ, բայց չսահմանափակվելով, RIME-ի իրավունքը համագործակցել ցանկացած իրավական գործընթացի հետ, որը վերաբերում է Առաջարկների Ձեր օգտագործմանը և/կամ երրորդ կողմի պնդմանը, որ Առաջարկների Ձեր օգտագործումը ապօրինի է և/կամ խախտում է այդ երրորդ կողմի իրավունքները): Դուք համաձայնում եք, որ RIME-ն իրավունք ունի, առանց Ձեր հանդեպ պարտավորություն ստանձնելու, բացահայտել Ձեր մասին ցանկացած տեղեկություն հարկային կամ իրավապահ մարմիններին, պետական պաշտոնյաներին և/կամ երրորդ կողմին, որը RIME-ի կարծիքով ողջամտորեն անհրաժեշտ է կամ նպատակահարմար է պարտադրելու կամ ստուգելու այս Գնման պայմանների յուրաքանչյուր մասի հետ համապատասխանությունը (ներառյալ, բայց չսահմանափակվելով, RIME-ի իրավունքը համագործակցել ցանկացած իրավական գործընթացի հետ, որը վերաբերում է Առաջարկների Ձեր օգտագործմանը և/կամ երրորդ կողմի պնդմանը, որ Առաջարկների Ձեր օգտագործումը ապօրինի է և/կամ խախտում է այդ երրորդ կողմի իրավունքները):

### 3. ԳԻՆԸ, ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 3.1 Առաջարկների համար վճարվող գինն այն է, ինչը ցուցադրված է համապատասխան գնման հաստատման վահանակին՝ պատվերի ընդունման պահին, և ենթակա է համապատասխան հարկման, ինչպես ողջամտորեն սահմանված է RIME-ի կողմից: Ձեր պատվերի ընդունման պահին Ձեր կողմից լիազորված վճարման եղանակով Ձեզանից կգանձվի գինը և հարկերը: ԴՈՒՔ ՊԱՍՏՄԱՆԱՍՈՒ ԵՔ ԱՅՍ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ: Պարզության համար, եթե Առաջարկը գնելուց հետո կամ եթե հետագայում Ձեր կողմից գնված Առաջարկի համար գովազդային նպատակներով առաջարկվի գների իջեցում, Ձեզ փոխհատուցում չի տրվի դրա համար: Եթե կարծում եք, որ Ձեր կողմից լիազորված վճարման եղանակից չլիազորված կերպով գումար է գանձվել, Դուք պետք է այդ մասին տեղեկացնեք RIME խանութի հաճախորդների սպասարկման բաժնին գնումից հետո 30 օրվա ընթացքում հետևյալ հասցեով՝ <https://www.blackberry.com/technicalsupport/index.do?ft=generic>:
- 3.2 Բաժանորդագրության ինքնաթարմացումը հասանելի է որոշ Առաջարկների համար, որի նպատակն է խնայել Ձեր ժամանակը և ջանքերը՝ ինքնուրույն երկարաձգելով Ձեր բաժանորդագրության ժամկետը, նախքան այն կլրանա: Գնելով բաժանորդագրության ինքնաթարմացման Առաջարկը, Դուք համաձայնում եք, որ Ձեր բաժանորդագրությունը ինքնուրույն կթարմացվի հաջորդ ժամանակաշրջանի համար, և որ Դուք ուղղակիորեն լիազորում եք RIME-ին գանձել յուրաքանչյուր բաժանորդագրության թարմացման գումարը Ձեր կողմից լիազորված վճարման եղանակից, մինչև որ կա մ Դուք (կամ, նվեր տրված բաժանորդագրության դեպքում, Դուք կամ նվեր ստացողը) չեղյալ համարեք բաժանորդագրությունը, կա մ RIME-ը դադարեցնի ինքնաթարմացումը և բաժանորդագրության գումարի գանձումը: Յուրաքանչյուր ինքնաթարմացված բաժանորդագրության Առաջարկի համար, որը Դուք ձեռք եք բերում, Ձեզ կուղարկվի առնվազն մեկ էլեկտրոնային նամակ այն էլեկտրոնային հասցեին, որը Դուք տրամադրել եք Ձեր BlackBerry ID-ի համար, որպեսզի հիշեցնի Ձեզ առաջիկա ինքնաթարմացման մասին, նախքան Ձեր բաժանորդագրությունը կթարմացվի: Դուք բացարձակ վերահսկողություն ունեք Ձեր բաժանորդագրության վրա և ցանկացած պահին կարող եք չեղյալ համարել Ձեր ինքնաթարմացումը: Ձեր պատվերի հաստատումը և հաստատման էլեկտրոնային նամակը կպարունակեն հրահանգներ Ձեր բաժանորդագրության ինքնաթարմացումը դադարեցնելու եղանակի վերաբերյալ: Խնդրում ենք հիշել, որ եթե Դուք դադարեցնեք Ձեր բաժանորդագրությունը առանձին վերցված Առաջարկի համար, Դուք պետք է ինքներդ թարմացնեք Ձեր բաժանորդագրությունը, որպեսզի շարունակեք օգտվել Առաջարկից:
- 3.3 Գնումների համար բոլոր գումարները կգանձվեն այն վճարման եղանակից, որը Դուք ընտրել էիք համապատասխան RIME խանութի համար: Եթե ցանկանում եք փոխել Ձեր վճարման եղանակը, Դուք կարող եք այդ անել RIME խանութում՝ Վճարման տարբերակներ մենյուի մեջ:

**4. ՎԱՃԱՌՈՂԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

4.1 Ինչ վերաբերում է RIME խանութի միջոցով անվճար բաշխումներին, սեփականության իրավունքը չի փոխանցվի Պարունակության և ծրագրերի Առաջարկների դեպքում: Դուք իրավունք ունեք օգտագործել Պարունակության և ծրագրերի Առաջարկների կրկնօրինակները, որոնք Դուք գնել եք՝ համաձայն օգտագործողի լիցենզիայի պայմանագրերի, օրենքների պայմանների կամ այլ պայմանների, որոնք ներառված են Առաջարկում («**Վաճառողի լիցենզիայի պայմաններ**»): BBSLA-ն սահմանում է պայմաններ, որոնք կիրառվում են այն դեպքերում, երբ չկան Վաճառողի լիցենզիայի պայմաններ: Որոշ Վաճառողի լիցենզիայի պայմաններ կարող են ընդգրկվել որոշակի ծառայությունների կանոնների մեջ: Օրինակ՝ եթե Դուք վարձում եք ֆիլմ, կարող է լինել ժամանակի սահմանափակում ֆիլմը դիտելը սկսելու վերաբերյալ (օրինակ՝ Գնումից հետո 30 օրվա ընթացքում) և երբ Դուք սկսեցիք դիտել ֆիլմը, կարող է լինել սահմանափակումներ, թե երբ պետք է ավարտեք այն դիտելը (օրինակ՝ 24 ժամվա ընթացքում): Կարող են լինել նաև սահմանափակումներ, թե սարքի որ մոդելներով կամ քանի տարբեր սարքերով Դուք կարող եք դիտել ֆիլմը: Դուք ընդունում և համաձայնում եք, որ Ձեր կարողությունը հասանելի դարձնել կամ օգտագործել այդ Առաջարկները կարող է ավտոմատ կերպով դադարեցվել, առանց դրա մասին Ձեզ տեղյակ պահելու՝ համապատասխան Վաճառողի լիցենզիայի պայմանների համաձայն:

**5. ՌԻՄԿԵՐ ԵՎ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆԵՐ**

5.1 Բացի Գնման պայմաններում այլ կերպ սահմանվածից, RIME խանութի Առաջարկների և In-App ապրանքների ներբեռնելու ընթացքում կորստի կամ վնասվելու ռիսկերը փոխանցվում է Ձեզ RIME-ի և Առաջարկի վաճառողի կողմից, համապատասխանաբար: Ինչ վերաբերում է այլ Առաջարկների բաշխումներին, երբ Դուք ներբեռնեք ցանկացած Առաջարկ, այն դառնում է Ձեր պատասխանատվությունը, և ո՛չ RIME-ը կամ նրա մասնաճյուղերը և ո՛չ էլ Առաջարկի վաճառողը պատասխանատվություն չեն կրի ցանկացած կորստի, ոչնչացման կամ վնասման համար: Դուք պետք է պահեք Ձեր Առաջարկների պահուստային կրկնօրինակները: Ձեր RIME խանութի շտեմարանը («**Իմ աշխարհը**») թույլ է տալիս Ձեզ Ձեր շարժական սարքում ջնջել և վերստին տեղադրել որոշ ծրագրեր և երբորդ կողմին պատկանող ապրանքներ, ինչպես այն մանրամասն ներկայացված է «Իմ աշխարհ»-ի ներկայիս կանոններում, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

**6. RIME-Ի ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, RIME ԽԱՆՈՒԹԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

- 6.1 Բոլոր գնումները ենթական են RIME-ի փոխհատուցման քաղաքականությանը, որը հասանելի է <http://www.blackberry.com/legal/rime-store-refunds-policy> հասցեով և որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է:
- 6.2 Խնդրում ենք դիմել համապատասխան RIME խանութի աջակցության կայքէջին աջակցության ծառայությունների համար, որոնք առկա են RIME խանութի համար, ինչպես նաև ներբեռնման հետ կապված խնդիրների դեպքում: Առաջարկի վաճառողները պատասխանատու են իրենց Առաջարկների երաշխիքային սպասարկման և աջակցման համար:
- 6.3 ՑԱՆԿԱՑԱԾ ԱՌԱՋԱՐԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ BBSLA-Ի ԴՐՈՒՅԹՆԵՐԸ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ՆՐԱՆՔ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԱՅՆՊԻՄԻ ՏԵՍԱԿՆԵՐԻՆ, ԻՆՉՊԻՄԻՔ ԵՆ ԾՐԱԳՐԵՐԸ, RIM ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԳՆՄԱՆԸ: ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՈՒ ՆԱԽՈՐԴԸ, ԼԻՑԵՆԶԻԱՆ, ԱՆՁՆԱԿԱՆ ՏԳՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ,

ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ, ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ, ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ, ԲԱՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԵՆ BBSLA-ՈՒՄ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ, RIM ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ: ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՁԵՎՈՎ, ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ԲԱՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ BBSLA-Ի ՄԵՁ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԲԵՐԵՆ RIME-Ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՏՈՒՑՈՂՆԵՐԻՆ (ՆԵՐԱՌՅԱԼ, ԲԱՅՑ ՉՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵԼՈՎ, ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՎ ՋԲԱՂՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԸ):

## 7. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՔՄԱՅԻՆ ՏՈՒՐՔԵՐ

- 7.1 Դուք կարող է ենթակա և պատասխանատու լինել մաքսային և/կամ ներկրման տուրքերի գանձումների համար, երբ Դուք ներբեռնում եք Առաջարկները: Ցանկացած նման գանձում մաքսագերծման համար կամ ներկրման տուրք պետք է վճարվի Ձեր կողմից: Դուք պետք է կապնվեք տեղական մաքսային մարմիններ հետ համապատասխան վարչատարածքային միավորում կիրառվող մաքսային քաղաքականություն և մաքսային վճարների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:
- 7.2 Դուք պետք է Ձեր հաշվին ձեռք բերեք ցանկացած լիցենզիա կամ համաձայնություն ցանկացած կառավարությունից կամ այլ մարմնից, որը պահանջվում է Ձեր կողմից Առաջարկների ձեռքբերման և օգտագործման համար, եթե դա անհրաժեշտ է, և պահանջի դեպքում դրա առկայությունը ներկայացնել RIME-ին: Վերոհիշյալը չանելու դեպքում Ձեզ իրավունք չի տրվելու հրաժարվել Առաջարկի համար վճարում կատարելուց կամ հետաձգել այն: Այս բաժնի պահանջներին չենթարկվելու պատճառով RIME-ի ցանկացած ծախսերը կամ վճարները պետք է վճարվեն Ձեր կողմից: Առաջարկները կարող են ենթակա լինել ներկրման, արտահանման և օգտագործման կանոնակարգման օրենքներին և կանոնակարգերին, որոնք գործում են այն տարածքում կամ այլ համապատասխան վարչատարածքային միավորում, որտեղ Դուք ստանում եք դրանք, որտեղից արտահանում եք Առաջարկները, ուր ներկրում ենք Առաջարկները կամ որտեղ օգտագործում եք Առաջարկները: Դուք պատասխանատու եք ենթարկվելու այդ օրենքներին և կանոնակարգերին, ինչպես նաև ներկայացնելու և երաշխավորելու, որ Դուք ոչինչ չեք անի դրանք խախտելու համար: Դուք նաև համաձայնում եք, որ Դուք պետք է ամբողջովին հատուցեք RIME-ին և յուրաքանչյուր RIME-ի ծառայություններ մատուցողներին, եթե Դուք չենթարկվեք այս բաժնի պահանջներին:

## 8. ԱՆՁՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- 8.1 Ի լրացումն BBSLA-ում տեղ գտած այն տեղեկությունների, որոնց Դուք համաձայնել եք, որ RIME-ը կմշակի Ձեր գնումը ամբողջացնելու և Ձեզ առաքելու համար, RIME-ը կարող է մշակել Ձեր կողմից լիազորված վճարման եղանակի հաշիվը և այլ մանրամասներ, ինչպիսիք են՝ վարկային քարտի համարը, վճարման հասցեն, եթերի ծառայություն տրամադրողի վերաբերյալ տեղեկությունները, ներբեռնված և գնված Առաջարկների վերաբերյալ տեղեկությունները և սարքի նույնականացման տեղեկությունները, ինչպես նաև օգտագործողի վերաբերյալ այլ համապատասխան մանրամասները, ինչպիսիք են՝ գնման պահին Ձեր գտնվելու վայրը («Վճարման տեղեկություններ»): Դուք համաձայն եք, որ RIME-ը կարող է ձեռք բերել այդպիսի տեղեկություններ կա՛մ ուղղակիորեն, կա՛մ այն ծառայություն մատուցողներից, որոնք RIME-ին մատուցում են առաքման և օժանդակ ծառայություններ, վճարումներ կազմակերպողներից, ինչպիսիք է PayPal-ը, վարկային քարտ տրամադրող կազմակերպություններից, կամ, carrier-billed գործարքների դեպքում, որոնք համապատասխանում են այս Գնման պայմաններին, Ձեր եթերի ծառայություններ տրամադրողից, եթե կիրառելի է: Դուք համաձայնում եք, որպեսզի RIME-ը Ձեր վճարման տեղեկությունները տրամադրի երրորդ կողմի լիազորված վաճառողին, վճարումները մշակողներին կամ այլ հաստատություններին, ինչը ողջամտորեն պահանջվում է Գնման գործընթացը և օժանդակ ծառայությունները արագացնելու համար: Որոշ դեպքերում, երբ Դուք նախկինում արդեն

երրորդ կողմի լիազորված վաճառողին տրամադրել էիք Ձեր վարկային քարտի տեղեկությունները, Ձեզ կարող է խնդրեն, որպեսզի այդ երրորդ կողմը տրամադրի RIME-ին այդ տեղեկությունները այն դեպքերի համար, որտեղ RIME-ը գործում է որպես լիազորված վաճառող Ձեր Գնումների համար: Եթե RIME-ը ձեռք բերի այդ վճարման տեղեկությունները, այն կօգտագործվի ինչպես ողջամտորեն պահանջվում է՝ Ձեր Գնումները արագացնելու համար՝ համաձայն այս Գնման պայմանների:

8.2 RIME-ի, նրա մասնաճյուղերի և ծառայություններ մատուցողների կողմից մշակվող անձնական տեղեկությունները կպահվեն համաձայն RIM-ի Անձնական տեղեկությունների պաշտպանության կանոնների (որին սույնով հղում է կատարվում և որը կարելի է տեսնել [www.blackberry.com/legal](http://www.blackberry.com/legal) կայքէջում կամ ստանալ՝ էլեկտրոնային նամակ ուղարկելով [legalinfo@rim.com](mailto:legalinfo@rim.com) հասցեին): Այսպիսի մշակումը կարող է ներառել Ձեր Գնումների հետ կապված առաքող և օժանդակ ծառայությունները, ինչպիսիք են՝ Ձեր պատվերը առաքումը, վճարի ստացումը, Ձեր պատվերի կարգավիճակի վերաբերյալ Ձեզ տեղեկացնելը, Առաջարկների բաժանորդագրության թարմացումները կամ նորացումները խթանելը (եթե կիրառելի է), RIME խանութը բարելավելը և Ձեզ արդյունավետ հաճախորդների սպասարկման ծառայություններ մատուցելը, լիցենզավորման սահմանափակումների պարտադիր կիրառումը, համապատասխան հարկերը նվազեցնելը, ինքնության հաստատումը և վարկային կարողության ստուգումը, խարդախության քննությունը և կանխումը և իրավական և կարգավորիչ պահանջների հետ համապատասխանությունը, կամ այն, ինչ թույլատրված է օրենքով: Վճարման տեղեկությունները կարող են մշակվել RIME-ի կողմից կամ նրա անունից Ձեր բնակության երկրի ներսում կամ դրսում գտնվող կազմակերպության կողմից, ներառյալ, առանց սահմանափակումների, Կանադայում, Միացյալ Նահանգներում, Միացյալ Թագավորությունում, Մինգապուրում կամ այլ երկրներում, որտեղ կան կազմակերպություններ, որոնք պատկանում են RIM Ընկերությունների խմբին կամ աշխատում են նրա անունից կամ այնտեղ, որտեղ կան համապատասխան ծառայություններ մատակարարողներ: Եթե Դուք բնակվում եք Եվրոպական տնտեսական գոտում, կամ այլ երկրում, որտեղ համաձայնություն է պահանջվում անձնական տեղեկությունները վարչատարածքային միավորից դուրս փոխանցման համար, Դուք թույլատրում եք այդպիսի գործողությունները:

## 9. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1 RIME-ի կոնտակտային տեղեկությունները և լրացուցիչ տեղեկությունները կարելի է տեսնել <http://www.blackberry.com/legal/rime> կայքում: